

յանձնուլած են մեր տագնապներու բարձուժը, մեր երազներուն սնուցումը: Աւելի՛ն. կան խումբեր, որոնք սա անաստուածութիւնը, փառքի նորոգման, յաղթութեան կարգախօսի կը վերածեն: Անոնք չեն զիջանիր նայելու իրենց հոգեյատակին, ուր ոչ մէկ քաղցր շունչ կը յածի, ոչ մէկ ջերմ հաւատքի սերմ կը հանգչի, բացի օրւան արձագանգներէն: Մաթիկի օրերուն, փրկուելիք հայրենիքին հօր միստիքէն, ձգողութենէն զատ, փրկագործումին աշխատանքն ալ զօրաւոր պատգամ մըն էր՝ դիւրաւ սիրտ հասնող:

Անոնք, որ Մաթիկին պէս, անկէ կանուխ ու անկէ ետք սահմանը անցան, ճշդիւ չէին գիտեր, թէ որոնց սիրոյն կը հնազանդէին. այդ հսկայական մարդոց հմայքի՞ն, թէ մեր հայրենիքին աւելի երեւակայական ողբերգութեան: Որքան քիչ կ'ըսեն երբեմն մեր բառերը: Որքան ծանր է հայոց պատմութիւնը, իր բոլոր դարերուն, բայց որքան անժուժելի՝ այդ պատմութիւնը, որուն վերջին օղակը մեր երեք քառորդ դարը կազմեց: Այս տողերը կարդացողներուն մէջ գտնուին դուցէ ցանցառ վերապրողներ, որոնք իրենց կեանքը ազատելու համար ընդունեցին գերագոյն նախատինքը... տաճկընալու, բայց եղան անկարող համոզելու իրենց հայրը, մայրը, որոնք իրենք զիրենք խառնեցին կարաւանին ու գացին մահուան: Գնաց այդ մայրը ու ձգեց իրմէ վերջին իր նայուածքը հոգիին մէջ տղուն, անմար կտոր մը կրակի նման ո՛ղջ մինչեւ այսօր: Մնացողներուն ճակատագի՛րը: Բայց որքան ընդարձակ է այդ ողբերգութիւնը: Ու մի գտնէք տարօրինակ, երբ դուք ձեզ դիտէք լրիւ գրաւուած այդ անդուհէն: Ո՛ր կողմէն որ քալենք, ո՛ւր որ ալ լլլանք, վիշտի թէ վայելքի մէջ, մեր հետն է այդ նայուածքը, խորհրդանիշ խորան: